

Աշխարհագրություն առարկայի 2017 թ. դպրոցական օլիմպիադայի  
մարզային (քաղաքային) փուլի

(տևողությունը՝ 150 րոպե)

11 - 12 – րդ դասարաններ

1. Հաշվել Հրազդան գետի միջին թեքությունը / պատասխանը հիմնավորել հաշվարկով/.....2 միավոր
2. Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 14 000, իսկ արտագաղթը՝ 6 000 մարդ:
  1. Որոշել բնակչության մեխանիկական աճը.....1 միավոր
  2. Որոշել բնակչության բնական աճը.....1 միավոր
3. Տեքստից դուրս գրել սխալները, և դրանց դիմաց գրել ճիշտը.....2 միավոր  
Իսպանիան պետական կառուցվածքով նախագահական հանրապետություն է: Այն գտնվում է Ապենինյան թերակղզու վրա: Երկրի կազմի մեջ մտնում են նաև Ազորյան և Բալեարյան կղզեխմբերը: Նրա հյուսիսային ափերը ողողում են Բոտնիկական ծոցի ջրերը:
4. Տրված քաղաքների կողքին գրել համապատասխան պետությունները.....1 միավոր
  1. Չունցին,
  2. Մեդելին,
  3. Գվադալախարա,
  4. Անտվերպեն:
5. Գրել այն երկրները, որոնց պատկանում են հետևյալ կղզեխմբերը.....2 միավոր
  1. Լիպարյան,
  2. Մոլուքյան
  3. Գալապագոս
  4. Շալիցբերգեն
  5. Լակադիվյան,
  6. Սպորադյան,
  7. Ալանդական,
  8. Հեբրիդյան:
6. Ընտրել մայրաքաղաքների այն խումբը, որոնց բնակչությունը դավանում է կաթոլիկություն... 1 միավոր
  1. Մադրիդ, Ռիգա, Սանտյագո,
  2. Մեխիկո, Սեուլ, Մինսկ,
  3. Մանիլա, Փարիզ, Վարշավա
  4. Թբիլիսի, Բոգոտա, Հռոմ
7. Արփայի, Փամբակի, Ողջիի և Ձորագետի գետահովիտները դասավորել հյուսիսից հարավ ճիշտ հաջորդականությամբ.....1 միավոր
8. Ինչի՞ց է կախված ձյան գիծը: Ինչպե՞ս է փոխվում ձյան գիծն ըստ աշխարհագրական լայնության / բերել օրինակներ /.....2 միավոր
9. Ի՞նչ ուղղությամբ է ձգվում փողոցը, որի վրա կեսօրին տների ստվերը չի ընկնում:.....1 միավոր

10. **Տնտեսության ո՞ր ճյուղերով են մասնագիտացել սկանդինավյան երկրները աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ: Նշել 4 մասնագիտացված ճյուղ.....1 միավոր**

1. **Տրված քաղաքային ագլոմերացիաները դասավորել բնակչության թվաքանակի աճման կարգով.....1 միավոր**

- |            |               |
|------------|---------------|
| 1. Տոկիո,  | 3. Նյու Յորք, |
| 2. Մոսկվա, | 4. Բեյջին:    |

2. **ԼՂՀ վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր**

1. Մեքենաշինական ամենախոշոր ձեռնարկությունը Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանն է:
2. Համախառն արտադրանքի ծավալով արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
3. Մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:
4. Ջրաէներգետիկական ամբողջովին ապահովում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը:
5. Գլխավոր հացահատիկային մշակաբույսը աշնանացան ցորենն է:
6. Կարտոֆիլի մշակությունը բուսաբուծության մասնագիտացման ճյուղերից է:

3. **Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր**

1. Բասենի դաշտը տարածվում է Արաքս գետի վերին հոսանքի ավազանում:
2. Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան և Արևելյան Տիգրիս գետերը:
3. Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրը Ալաշկերտի դաշտն է :
4. Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի վերնագավառում է՝ 1800-2400 մ – ի վրա:
5. Կարնո և Դերջանի դաշտերը գտնվում են Արածանի գետի հովտում:
6. Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից են Խնուսի և Մշո դաշտերը:

4. **Կենդանի օրգանիզմների համակեցության և դրանց բնակեցման միջավայրի ամբողջությունը կոչվում է .....1 միավոր**

- |                      |                            |
|----------------------|----------------------------|
| 1. աշխարհահամակարգ,  | 3. էկոհամակարգ,            |
| 2. շրջական միջավայր, | 4. աշխարհագրական միջավայր: |